ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3212-Ա « 29 » հունիսի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը.

1.Երևան քաղաքի սեփականությունը համարվող փոքրածավալ բեռնատար /պիկապներ/ մեքենաներն (այսուհետ՝ Գույք) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին՝ համաձայն հ.1 հավելվածի:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենի հետ կնքել Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված Գույքի հանձման – ընդունման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

4.Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իրականացնել Գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված հ.1
Երևանի քաղաքապետի
29.06.2026թ.
հ. 3212-Ա որոշման

ՑԱՆԿ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Անվանումը	Նույնականացման համար	Միավոր արժեքը (ՀՀ դրամ)	Քանակը	Պայմանագրի ծածկագիր
Փոքրածավալ բեռնատար (պիկապներ) մեքենաների ձեռքբերում RICH7, Zhengzhou Nissan Automobile Co.,	VIN LJNTGUC57SN385855 VIN LJNTGUC58TN395862 VIN LJNTGUC53SN385853 VIN LJNTGUC59TN395224	13 761 000 13 761 000 13 761 000 13 761 000	4 հատ	19.01.2026թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-1
Ընդամենը՝		**55 044 000**		

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված հ.2
Երևանի քաղաքապետի
29.06.2026թ.
հ. 3212-Ա որոշման

ԿԱԶՄ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Վ.Մարգարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ռամազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջին կարգի մասնագետ
Ա. Խուդոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ
Ս. Կատվալյան	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**